

# Սուիճակագրական Մատչելի

Հասան Արթուրի ափ մը քաջասիրտ Հայերը, մուլեգին խուժանին դեմ երեք օր կատաղի կռիւ մը մղելով՝ կապար եւ վառօդին սպառելէ յետոյ, ստիպուած էին խոյս տալ Ամանոսի անմատչելի սարերը. իսկ ծերերը, կիներ ու երեխաներ, գիւղէն վեր սարահարթի մը վրայ կը հաւաքուին, վասն զի առջի իրիկուրնէ իրենց գիւղը ամբողջովին կրակի էր տրուած թշնամիին ձեռքով: Ու ադ սարահարթին վրայ, (ուր դէպքէն յետոյ կառավարութեան օժանդակութեամբ նոր եկեղեցի մը կառուցեր էին, զոր այս օրերս քանդել տուաւ Ատանայի կուսակալ Ճեմալ պէյը,) հոս ամբողջ գիշեր բաց օդին մէջ լաց ու կոծով կ'անցընէն: Առտուն զինեալ խուժանը կը խուժէ աւանակաշտական դժբաղդներու վրայ՝ արիւնկալ ու պատառոտ գայլերու նման. հոս կը փրթի սրտաճմլիկ վայնասուն մը, աղէխարշ ճիչ մը, որուն կ'արձագանգեն լեռներն ու ձորերը Ամանոսի: Լայիւր ու լկտի Պաշտպօզուքները՝ կը սկսին իրենց գազանային գործին. ու ապա ադ եղկելիները կիսամերկ ու մարած վիճակի մէջ քաշկռտելով կը տանին Պախճէի կառավարչատունը, իրենց վերապահելով մանկամարդներն ու գեղեցիկները:

Ասդին՝ լեռներու ծերպերը, մացառներու մէջ պահուրտած կը մնան գիւղին քահանաները, մաս մը այրեր ու կիներ: Քիլիսէն հոն արդէն խուժանին օգնութեան հասած էին բաւական թիւով զինուորներ, որ կը սկսին փողահարութեամբ պահուրտած հայերը հրաւիրել, երդում ընելով Փատիշահին ու Մարգարէին անուան որ պիտի պաշտպանուին. ու հազիւ թէ պահուրտած խեղճերը իրենց գոյութիւնը ցոյց կուտան ու կը համախմբուին զինուորներու շուրջ, հոս կը սկսի պաշտօնական ջարդը: Հասան Արթուրի 80 տարեկան ծերունի քահանային կ'առաջարկեն Իսլամութեան կրօնքը ընդունիլ. քահանան գետին կը խոնարհի, քիչ մը հող կ'առնէ, կ'աղօթէ, եւ կը դնէ իր բերանը, ու իր դահիճներուն դառնալով կ'ըսէ. «Զինուոր տղաքս, ես 80 տարեկան ծերունի մըն եմ, կրօնափոխ ըլլալէն աւելի՝ աւազարհէն փոխուիլը նախամեծար է ինծի. ես ձեզի յանձնուեցայ սա քանի մը ընտանիքներով. իբր օսմանցի քաջարի զինուորներ եթէ չէք խնայեր կեանքիս՝ կրնաք գնտակով մը սպաննել զիս. բայց պիտի խնդրէի որ ճիշդ սրտէս զարնէք, որպէս զի շատ չչարչարուիմ: Ե զինուորները, սակայն, առանց Պաշտպօզուքներու աւելորդ յոգնութիւն մը պատճառելու՝ տեղն ու տեղը գնտակահար կ'ընեն քահանան, ու ապա կը սկսին սուիճակներով ծակծկել անոր մարմինը:

Հասան Արթուրի ահաւոր ու քստմնեցուցիչ ջարդէն յետոյ՝ ողջ մնացած Հայեր տասն եւ հինգ օր վերջը վերադարձած իրենց այրած ու մոխրացած գիւղը, սկսան ասդին անդին իրենց սիրելիներու ինկած դիակները հաւաքել ու թաղել: Գտան Տ. Պետրոսի մարմինն ալ, ու երբ բզկտուած վերարկուն ու պարեգօտը կը հանէին պատանքելու համար, անոր կրծոց վրայ գտան իր արիւնոտ Մաշտոցը որ իր հօտին սիրովը բարախող սրտին հետ սուիճակահար եղած էր:

Մեր վիճակային այցելութեան՝ երբ Հասան Արթուրի հասանք, նոյն Մաշտոցը ցոյց տուին, եւ ես իբր արիւնոտ յիշատակ մը առի ադ սուիճակահար Մաշտոցը, յանձնելու համար Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին, որպէս զի յատուկ յիշատակագրով մը պահել տան վանքին գանձարանը: Աս Մաշտոցով շրջեցայ գիւղէ գիւղ, ու երբ *Տասըլլը* ըսուած հայ գիւղը հասայ, ուր հազիւ թէ 56 այր մարդ էր մնացեր 60 հոգիէ բաղկացած բնակչութենէն, քանի մը տարիքոտ այրի կիներ խնդրեցին որ չմկրտուած չորս երախաներ կան, զանոնք մկրտեմ: Անմիջապէս տաշտի մը մէջ տաք ջուր պատրաստել տուի, ու սկսայ լացող ու լացնող այրիներէ շրջապատուած՝ կատարել մկրտութեան կարգը. ու երբ տողոց անունները կոչելու կարգն եկաւ, պահ մը կեցայ առաջին մանչին վրայ. անուններ մտածեցի, սիրուած ու պաշտուած անուններ հայ նահատակներու եւ խնկելի անուններու ցանկը երամովին մէկիկ մէկիկ անցուցի մտքիս յուշատետրի թերթերը թղթատելով: Ի՞նչ դնէի ադ գիւղի, ադ սարերու զակին անունը: Նայեցայ մէջ մը երախային կայծկլտուն աշուկներուն, *թումպուլ թումպուլ* իրանին, կայտատ ու քաջակազմ, նայեցայ մէջ մըն ալ ձեռքս բռնած արիւնոտ ու սուիճակահար Մաշտոցին, ու կոչեցի երախային անունը ՍՈՒԻՆ:

Երբ Իսլահիյէ գաւառակը հասայ, գիշերը հեռագիր մը առի, Հասան Արթուրի Եկեղեցիին քանդումը գուժող: Յուրտ սարսուռ մը փշաքաղեց հոգիս, ու յանկարծ մտքիս ու աչքիս առաջքն եկան սարահարթը, անոր վրայ հաւաքուած հայ կիներն ու երախաները, պղծուած պարկեշտ հայ կոյսերը, գնտակահար ծերունի քահանան, անոր արիւնոտ ու սուիճակահար Մաշտոցը, Ամանոս լեռան կողքին վրայ քար ու քանդ

Եղած Ֆասըլը հայ գիւղակը, ու հոն միւռոնէն աւելի արցունքներովս մկրտուած անմեղ երախան՝  
ՍՈՒԻՆՆը:

Ատանա

ՆԵՐՍԷՍ ԵՊՍ. ՍՍԱԿԱՆ

**ՏԱՃԱՐ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ  
Բ. ՏԱՐԻ, ՇԱԲԱԹ, 30 ԱՊՐԻԼ 1911, ԹԻԻ 16**

To read the Armenian texts, you will need to download standard(ARMSII-8 compatible) Armenian fonts. Please click [HERE](#) to download all the necessary files and fonts.